ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶՊԵՏ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

27 սեպտեմբերի 2016թ. N 81 - Ա

«ԿԱՊԱՆԻ ԲԺՇԿԱԿԱՆ ԿԵՆՏՐՈՆ» ՓԱԿ ԲԱԺՆԵՏԻՐԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ ԿԱՆՈՆԱԴՐԱԿԱՆ ԿԱՊԻՏԱԼՆ ԱՎԵԼԱՑՆԵԼՈՒ ԵՎ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶՊԵՏԻ 2007թ. ՕԳՈՍՏՈՍԻ 1-Ի N 199-Ա ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Բաժնետիրական ընկերությունների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 35-րդ հոդվածի 1-ին կետով, 67-րդ հոդվածի 1-ին կետի «ա» և «է» ենթակետերով, «Իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 70-րդ հոդվածի 2-րդ և 5-րդ մասերով, ի կատարումն Հայաստանի Հանրապետության կառավարության 2016 թվականի հուլիսի 7-ի N 722-Ա որոշման 9-րդ և 17-րդ կետերի, **ո ր ո շ ու մ եմ՝**

1. << Կապանի բժշկական կենտրոն>> փակ բաժնետիրական ընկերության 51996355 ՀՀ դրամ կազմող կանոնադրական կապիտալը ավելացնել 355954250 ՀՀ դրամով՝ լրացուցիչ բաժնետոմսերի թողարկման և տեղաբաշխման միջոցով: Ավելացումից հետո կանոնադրական կապիտալը սահմանել 407950605 ՀՀ դրամ:
2. Հաստատել կանոնադրության փոփոխությունը և Հայաստանի Հանրապետության Սյունիքի մարզպետի 2007 թվականի օգոստոսի 1-ի N 199- Ա որոշմամբ հաստատված «Կապանի բժշկական կենտրոն» փակ բաժնետիրական ընկերության կանոնադրության 4.2 կետը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«Ընկերության կանոնադրական կապիտալը կազմում է 407950605 (չորս հարյուր յոթ միլիոն ինն հարյուր հիսուն հազար վեց հարյուր հինգ) ՀՀ դրամ , որը կազմում է 4527 (չորս հազար հինգ հարյուր քսանյոթ) հատ հասարակ /սովորական/ անվանական բաժնետոմս, մեկ բաժնետոմսի անվանական արժեքը կազմում է 90115 (իննսուն հազար հարյուր տասնհինգ) ՀՀ դրամ:

Ընկերության բոլոր 4527 սովորական բաժնետոմսերը տեղաբաշխված են, սեփականության իրավունքով պատկանում են Հայաստանի Հանրապետությանը և լրիվ վճարված են նրա կողմից:
Ընկերության բոլոր բաժնետոմսերը հասարակ /սովորական/ են»:

3. Հանձնարարել «Կապանի բժշկական կենտրոն» փակ բաժնետիրական ընկերության տնօրենին՝ ապահովել կանոնադրության փոփոխության պետական գրանցումը ՀՀ իրավաբանական անձանց պետական ռեգիստրի գործակալությունում:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶՊԵՏ **Ա. ԽԱՉԱՏՐՅԱՆ**

2016թ. սեպտեմբերի 27
ք. Կապան

Հաստատված է
Հայաստանի Հանրապետության
Սյունիքի մարզպետի 2016թվականի
սեպտեմբերի 23-ի N - Ա որոշմամբ
ՀՀ Սյունիքի մարզպետ՝

Ս. ԽԱՉԱՏՐՅԱՆ

Կազմված է 24.09.2016թ և բաղկացած է 1 թերթից
Տպագրված է ընդամենը 2 օրինակ
ՕՐԻՆԱԿ - - -
ԳՐԱՆՑՎԱԾ Է
ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԻՐԱՎԱԲԱՆԱԿԱՆ ԱՆՁԱՆՑ ՊԵՏԱԿԱՆ
ՌԵԳԻՍՏՐԻ ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ ՄԱՐՄՆԻ
ԿՈՂՄԻՑ 05.09. 2007թ.
Գրանցման թիվ- 222.120.00769
Վկայական 03Ա 076979
ՀՎՀՀ 09420382
05.09.2007թ. գրանցված կանոնադրության
Թիվ - - - - փոփոխությունը գրանցված է
իրավաբանական անձանց պետական
ռեգիստրի տարածքային բաժնի
կողմից « » ---------- 2016թ

«ԿԱՊԱՆԻ ԲԺՇԿԱԿԱՆ ԿԵՆՏՐՈՆ»
ՓԱԿ ԲԱԺՆԵՏԻՐԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹՅՈՒՆ
Կ Ա Ն Ո Ն Ա Դ Ր Ո Ւ Թ Յ Ո Ւ Ն
/ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ/

1. « ԿԱՊԱՆԻ ԲԺՇԿԱԿԱՆ ԿԵՆՏՐՈՆ » փակ բաժնետիրական ընկերության կանոնադրության մեջ կատարել հետևյալ փոփոխությունը.

1). Ընկերության կանոնադրության 4.2 կետի 1-ին պարբերությունը կարդալ հետևյալ նոր խմբագրությամբ.

Ընկերության կանոնադրական կապիտալը կազմում է 407950605 (չորս հարյուր յոթ միլիոն ինն հարյուր հիսուն հազար վեց հարյուր հինգ) ՀՀ դրամ, որը կազմում է 4527 (չորս հազար հինգ հարյուր քսանյոթ) հատ 90115 (իննսուն հազար հարյուր տասնհինգ) ՀՀ դրամ անվանական արժեքով հասարակ (սովորական) բաժնետոմսեր:

2. Սույն փոփոխությունը հանդիսանում է «ԿԱՊԱՆԻ ԲԺՇԿԱԿԱՆ ԿԵՆՏՐՈՆ» փակ բաժնետիրական ընկերության կանոնադրության (գրանցված 05.09.2007թ.) բաղկացուցիչ մասը: